ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն էներգիայի համար՝ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն

Իրականացման ժամանակահատված: 01.01.2011 - 30.12.2029

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 94 450 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EBRD, EIB, NEFCO, CEB, KfW, NIB, WBG

Նախագծի կայքէջ: e5p.eu

Նախագծի նկարագրություն:

«Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերությունը» (E5P) 243 միլիոն եվրո գումարի չափով բազմադոնոր հիմնադրամ է, աշխատում է տարատեսակ Իրականացնող գործակալությունների հետ, նախաձեռնվել է 2009 թ.-ին Եվրամիությունում Շվեդիայի նախագահության ընթացքում՝Արևելյան գործընկերության տարածաշրջանում էներգաարդյունավետ և բնապահպանական ծրագրերում մունիցիպալ ներդրումների խրախուսման նպատակով: Սկզբնապես ակտիվ լինելով Ուկրաինայում, հիմնադրամը 2014 թ.-ին պաշտոնապես ընդլայնել է իր գործունեությունը դեպի Հայաստան, Վրաստան և Մոլդովա, 2017 թ.-ին հիմնադրամին միացել է Բելառուսը, իսկ 2019 թ.-ին՝ Ադրբեջանը:

E5P հիմանդրամը միավորում է Եվրամիության և 24 պետություններից, այդ թվում՝ հիմնադրամի շահառուներ հանդիսացող երկրներից բաղկացած խմբի ֆինանսական ներդրումները: ԵՄ-ն հիմնադրամի խոշորագույն ներդրողն է և E5P-ի գլխավոր կառավարման մարմնի՝ Ներդրողների ասամբլեայի, Նախագահը: ՎՁԵԲ-ը հանդես է գալիս որպես E5P հիմնադրամի կառավարիչ՝ տրամադրելով վարչական աջակցություն բոլոր շահագրգիռ կողմերի անունից հիմնադրամը կառավարելու նպատակով:

Ինչպես է գործում հիմնադրամը

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագրերի միջոցով հիմնադրամը նպատակ ունի.

- Նվազեցնել CO2 և այլ վնասակար ջերմոցային գազերի արտանետումները:
- Բարելավել էներգաարդյունավետությունը:
- Աջակցություն ցուցաբերել քաղաքականության վերաբերյալ երկխոսությանը և կարգավորող ոլորտի բարեփոխումներին: